ՏԵՂԵԿԱՆՔ
« ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 90. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունվող որոշումները

1. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը կամ մի քանիսը.

1) պատասխանատվության միջոց կիրառելու մասին.

2) պատասխանատվության միջոցի կիրառումից ազատելու մասին.

3) իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու մասին:

2. Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշում ընդունելու դեպքում Հանձնաժողովը կարող է վարույթով պատասխանողի գույքի վրա կիրառված տուգանքի չափով նույն կամ մինչև այդ որոշման անբողոքարկելի դառնալն ընդունված առանձին պատճառաբանված որոշմամբ դնել արգելանք, եթե նման որոշում չկայացնելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել Հանձնաժողովի՝ պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման կատարումը:

3. Պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշումն արգելանք դնելու մասով կամ առանձին ընդունված արգելանք դնելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է անհապաղ կատարման Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

~~4. Արգելանք դնելու մասին որոշումը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ներկայացվում Հանձնաժողովի նախագահի գրությամբ, որում նշվում են՝~~

~~1) Հանձնաժողովի անվանումը,~~

~~2) գրությունը ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը,~~

~~3) արգելանք դնելու մասին որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը,~~

~~4) արգելանք դնելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու տարին, ամիսը և ամսաթիվը,~~

~~5) արգելադրման ենթակա գումարի չափը,~~

~~6) պարտապանի անունը, հայրանունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը, նրանց հաշվառման (գտնվելու վայրի) և առկայության դեպքում ծանուցման հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների~~

~~համարանիշը, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը:~~

5. Արգելանք դնելու մասին որոշումը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկելու վերաբերյալ գրությունը Հանձնաժողովի նախագահի գրությամբ հետ է պահանջվում, եթե՝

1) վարույթով պատասխանողի վերաբերյալ ընդունված պատասխանատվության միջոց կիրառելու մասին անբողոքարկելի որոշումը ~~«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն.

2) վարույթով պատասխանողի՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տուգանքը վճարելու պարտավորությունը դադարել է.

3) Հանձնաժողովի որոշումը ճանաչվել է անվավեր կամ ուժը կորցրած:

6. Արգելանք դնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել: Որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա կատարումը:

Հոդված 100. Հանձնաժողովի որոշմամբ նշանակված տուգանքի վճարումը

1. Հանձնաժողովի որոշմամբ նշանակված տուգանքի 75 տոկոսը որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, վճարելու դեպքում տուգանքի վճարման պարտականությունը համարվում է պատշաճ կատարված:

2. Հանձնաժողովի որոշմամբ նշանակված տուգանքը կամովին չվճարվելու դեպքում որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկվում է հարկադիր կատարման՝ ~~«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

Հոդված 101. Հանձնաժողովի որոշմամբ տրված հանձնարարությունների կատարումը

1. Հանձնաժողովի որոշմամբ սահմանված պայմանները, նախատեսված պարտավորությունները և տրված հանձնարարությունները որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա են անհապաղ, սակայն ոչ ուշ, քան որոշման մեջ սահմանված ժամկետում կատարման, և որոշման բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

2. Հանձնաժողովի որոշմամբ տրված հանձնարարությունները դրանցում սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա են հարկադիր կատարման՝ ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին»~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված որոշումները ներկայացվում են հարկադիր կատարման դրանցում նշված ժամկետում չկատարվելու դեպքում:

~~4. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված որոշումները հարկադիր կատարման ներկայացնելիս Հանձնաժողովը որոշմանը կից ներկայացնում է այդ որոշումը հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն, որում նշվում են՝~~

~~1) որոշումը հարկադիր կատարման ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը,~~

~~2) որոշմամբ կատարման ենթակա գործողությունները և (կամ) այն գործողությունները, որոնց կատարումից պարտավոր անձը պետք է ձեռնպահ մնա, և դրանց կատարման համար որոշմամբ սահմանված ժամկետը,~~

~~3) որոշումն ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, որոշման համարը և որոշումն ուժի մեջ մտնելու տարին, ամիսը, ամսաթիվը,~~

~~4) պարտավոր անձի անունը, հայրանունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը, նրանց հաշվառման (գտնվելու վայրի) և առկայության դեպքում՝ ծանուցման հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը:~~

~~5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարկադիր կատարման վերաբերյալ գրությունը և օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր կարող են Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկվել, և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից փաստաթղթերը կարող են ստացվել էլեկտրոնային եղանակով:~~

6. Հանձնաժողովի որոշմամբ տրված հանձնարարությունները հարկադիր կատարման ներկայացնելը տնտեսավարող սուբյեկտին չի ազատում Հանձնաժողովի որոշումները չկատարելու համար սույն օրենքով նախատեսված պատասխանատվությունից: